# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՑ

15 ՕԳՈՍՏՈՍ

## ԱՆԳՂԻԱ

Անգղիա զբաղեցաւ ցարդ Թրանսվաալի հետ դաշնագրութեան. ընդհանուր կարծիքն հակառակ էր պատերազմի, թէպէտեւ տէրութիւնը իւր կողմէն կարեւոր պատրաստութիւնները կը տեսնէր ։ Քրիւճէրի խաղաղութեան և հաշտութեան համար ունեցած բարեյօժար կամօքն հանդերձ, օրըստօրէ պատերազմական ոգին կը զրգռուի, պաշարք, պատերազմական գործիք և նիւթք ղրկուեցան ի Թրանսվաալ, և անգղիական տէրութիւնը հրամայեց շատ Անգղիացւոց որ պատրաստուին ելլելու այն տեղէն։ Թուի թէ պատերազմն անհրաժեշտ պիտի ըլլայ։

## ԳԱՂՂԻԱ

Դեռ եւս Տրէյֆիւսի անվերջանալի խնդիրն գաղղիական տէրութիւնը կը վրդովէ։ Վերջապէս Տրէյֆիւս դատաստանի ելաւ վերստին ունենալով իրեն ջատագովները և հակառակորդները. զինուորք դատաստանարանին չորս կողմը բռնելով հանդերձ՝ Լապորին մահացու վիրաւորուեցաւ Տրէյֆիւսի հակառակորդներէն։ Կ. Ռէսման երբեմն Իտալիոյ պաշտօնեայն ի Գաղղիա՝ մեռնելով ի Փարիզ, համբաւեցին իբր թէ Տրէյֆիւսի խնդրոյն վերաբերեալ կարեւոր վաւերագիրներ կան եղեր քովը, զորս այրեր են։ Բայց կոմսն Թոռնիէլլի յայտարարեց որ այդ թուղթք պարզ ընտանեկան նամակներ էին, և թէ դեսպանատան երեք պաշտօնեայք միւս թղթերը կնքեցին և ըստ կամաց վախճանելոյն միայն կտակը առին։ Այս խնդիրներու միջոցին Տէլքասսէ պաշտօնեայն գրեթէ փախստեամբ ուղեւորեցաւ ի Փեդրըսպուրկ, և Զարէն ու Մուրավիէֆէն մեծ ընդունելութիւն գտաւ։ — Անգղիական լրագիրք շատ կը զբաղին այս յանկարծական ուղեւորութեան վրայ.

## ԻՏԱԼԻԱ

Ծիլէգգա զօրավարը արձակուեցաւ Լուպէ նախագահին շնորհիւը և է ի Փիաչէնցա։ — Վենետաւէլլայի իշխանութեան հետ կրցաւ Իտալիա դաշնագրութիւն ընել, որոյ զօրութեամբն Իտալիոյ գաղթականութեան գործը մեծ կարեւորութիւն կ'առնու։ — Մարդինին գալով յԱփրիկէէ ի Հռովմ՝ գոհացուցիչ տեղեկութիւններ տուաւ Մասսաուայի մասին, և կ'երեւի թէ Անգղիա ալ Սուտանի սահմանագլխոյն պահպանութիւնը պիտի յանձնէ Իտալիոյ։ — Վիսքոնթի Վենոստայ կ'ուզէր ետ կանչել մի կամ երկու նաւեր՝ որոնք ճենական ծովու մէջ են, և Իտալիոյ նպաստաւոր կերպով կնքել Սան Մէօնի խնդիրը։ — Վերջերս անհիմն լուրեր տարածուեցան իբրեւ թէ Փարիզու իտալական դեսպանը յետս պիտի կանչուէր, և թէ իտալ-ճենական խնդրոյն մէջ Իտալիան կորուստ կ'ընէ։ Վասն զի ըստ ոմանց, Ռաճճի իտալական դեսպան ի Փէքին հրաժարեր է Սան Մէօնէն, ըստ այլոց՝ ոչ, այլ թէ՝ նա դաշնագրութեան հետամուտ է, բայց Ճենք կը դանդաղին ։

## ԱՅԼԵՒԱՅԼ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ՌՈՒՍԻՈՅ մէջ յետ մահուան Զարեւիչի, Զարն յայտարարեց՝ թէ քանի որ զաւակ չունի՝ իւր թագաժառանգն է մեծ դուքսն Միքայէլ։ — Այայի զինաթափութեան ժողովը աւարտեցաւ, և մի քանի տէրութեանց ներկայացուցիչք ստորագրեցին երեք դաշնագրերը՝ որոնք կը վերաբերին համազգային վէճից, պատերազմի գործածութեանց և օրինաց, և այլն։ Շատ տէրութիւնք դեկտեմբերի ձգեցին իրենց ստորագրութիւնը։ — ԱՒՍՏՐԻՈՅ մէջ օր ըստ օրէ կը զայրանայ Չեքերու և Գերմանացւոց մէջ եղած ատելութիւնն։ Ի Պուտափեշտ մեծ չփոթութիւն հանեցին 15,000 գործաւորք։ — Վեննայի և Աւստրիոյ զանազան տեղերու մէջ խռովութիւնը տիրեր է, վասն զի տէրութիւնը առանց խօսարանին հաւանութեան տուրքը աւելցուցեր է։ — ՍՊԱՆԻԱ տակաւին չխաղաղեցաւ. մատակարարական խնդիրք զինքը կը յուզեն։ Հասարակապետականք շարունակ կը գործեն, որոց հակառակ Սիլվելա ծանոյց՝ թէ սպանիական տէրութիւնը անխնայ պիտի ըլլայ անոնց դէմ՝ որք կը ջանան Սպանիան բաժնել և կամ Տօն Քարլոսի նպաստաւորք են։ — ՍԵՐՊԻՈՅ մէջ կը տիրեն ահ և արհաւիրք. շատեր բանտարկուեցան. Պելկրատ գրեթէ պաշարման մէջ էր, ուր պիտի քննուի երբեմն Միլան թագաւորին վրայ եղած յարձակումը։ Արմատականաց դէմ սաստիկ զայրացած է սերպական կառավարութիւնը։

digitised by A.R.A.R.@